



«Իրավաբանական լրատուն» պարբերական է, որը նպաստում է արդի իրավական մշակույթի ձևավորմանը

2006թ. նոյեմբեր, թիվ 6

## ՍՏԵՂԾԵՆՔ ՔԻՉ ՕՐԵՆՔՆԵՐ, ԲԱՅՅ ՀԵՏԵՎԵՆՔ, ՈՐՊԵՍՁԻ ԴՐԱՆՔ ԿԱՏԱՐՎԵՆ: Ջ. ԼՈՔ

Ներկայումս Հայաստանում կարևորագույն ու հրատապ խնդիրներներից են համարվում քաղաքացիների իրավական իրազեկության բարձրացման և իրավունքների պաշտպանության խնդիրները: Պետությունը պարտավոր է զբաղվել իր քաղաքացիների իրավական իրազեկության բարձրացման և իրավունքների պաշտպանության հարցերով՝ հասկանալով, որ միայն իր իրավունքներին տեղյակ և այդ իրավունքների պաշտպանությունը գիտակցող քաղաքացիների շնորհիվ է հնարավոր Հայաստանում արմատավորել բարձր իրավագիտակցությունն ու իրավական մշակույթը: Պետությունը պետք է նաև ապահովի և զարգացնի անձանց խախտված իրավունքների պաշտպանության մեխանիզմները՝ հիմնական շեշտը դնելով անկախ և արդյունավետ դատական համակարգի կայացման վրա: Քաղաքացիներն էլ իրենց հերթին պետք է հասկանան, որ իրենք պարտավոր են լինել իրազեկ, պարտավոր են թույլ չտալ, որպեսզի իրենց իրավունքները խախտվեն, իսկ խախտվելու դեպքում էլ պարտավոր են ցուցաբերել համապատասխան կամք և վճռակամություն՝ իրենց խախտված իրավունքների վերականգնման համար:



### Ի ԼՐԱՅՈՍ

#### ՀԱՄԱՐԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

Իրավաբանական լրատուն իր նախորդ համարում սահմանադրական արդարադատության հարցերի վերաբերյալ հարցազրույց էր տպագրել ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Հարությունյանի հետ: Հարցազրույցի երկրորդ մարդու իրավունքների պաշտպանության և դատական համակարգի հարցերին նվիրված մասը տես էջ 4-5-ում:

#### ԳԻՏԱԺՈՂՈՎ

2006թ.-ի նոյեմբերի 14-ին տեղի ունեցավ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից կազմակերպված «Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» իրավաբան ուսանողների հանրապետական երրորդ գիտաժողովի բանավոր փուլը: Մանրամասները՝ էջ 2-ում:

#### ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրամանագրով Արմեն Խաչատրյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր:

Արդարադատության խորհրդի 2006թ.-ի նոյեմբերի 13-ի նիստում ՀՀ Նախագահի ներկայությամբ տեղի է ունեցել նորանշանակ դատավորի երդման արարողությունը: Ստանձնելով դատավորի բարձր պաշտոնը՝ նա երդվել է արդարադատություն իրականացնելիս ենթարկվել միայն Սահմանադրությանը և օրենքներին, լինել անաչառ և սկզբունքային, արդարացի և մարդասեր, բարձր պահել պետության ու դատարանի հեղինակությունը: ՀՀ Նախագահը, շնորհավորելով նորանշանակ դատավորին, ասել է, որ նրանից ակնկալում է ազնիվ, անաչառ ու սկզբունքային աշխատանք:

#### ՀԱՎԱՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

ՀՀ Սահմանադրական դատարանը 2006թ.-ի նոյեմբերի 7-ի նիստում ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչել ՀՀ ընտրական օրենսգրքի այն դրույթները, որոնք նախատեսում են ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կազմում դատավորների ընդգրկումը: Սահմանադրական դատարանի կողմից անվավեր և Սահմանադրությանը հակասող ճանաչվեցին նաև ընտրական օրենսգրքի այն դրույթները, որոնք նախատեսում են ԿԸՀ-ի եւ ԸԸՀ-ների թափուր տեղերը լրացնել դատավորների թվից: Սահմանադրական դատարանում գործը լավում էր ՀՀ Ազգային ժողովի 27 պատգամավորների դիմումի հիման վրա:

#### ՔՐԵԱԿԱՆ

2006 թվականի 9 ամիսների ընթացքում ՀՀ քննչական մարմինների վարույթում քննվել է ՀՀ Քրեական օրենսգրքի 132-րդ, 261-րդ, 262-րդ հոդվածների (շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը, շահադիտական նպատակով այլ անձի պռոնկությամբ զբաղվելու մեղքավելը, պռոնկությամբ զբաղվելու նպատակով) հատկանիշներով հարուցված 34 քրեական գործ, որոնցից 29-ը քննվել է ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչության վարույթում, 3-ը՝ ոստիկանության Շիրակի, իսկ 2-ը՝ Լոռու մարզի քննչական բաժիններում:

**ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՈՒՄՆԵՐԸ ԸՆՈՒՄ**

Յուրաքանչյուր ժամանակակից պետության քաղաքակրթության աստիճանը որոշվում է տվյալ պետությունում մարդու իրավունքների պաշտպանվածությամբ: Դա է պատճառը, որ յուրաքանչյուր պետություն պետք է գիտակցի և կարևորի մարդու իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը՝ որպես միջազգային իրավունքի հիմնարար և գերակա սկզբունք: Հենց այս սկզբունքի իրականացմանն է կոչված մաս փաստաբանությունը: Հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ և լինելով անկախ պետական և այլ մարմիններից՝ փաստաբանությունը իր ողջ էությունը կոչված է օժանդակելու օրինականության և արդարադատության իրականացմանը: Փաստաբանությունը՝ որպես առանձին գործունեության տեսակ, ժողովրդավարության կայացման կարևորագույն միջոց է հանդիսանում: Այդ իսկ պատճառով այն պահանջում է հասարակության և պետության առավել ուշադրություն: Այս նպատակների իրագործմանն է նպաստում մաս «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից «Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայով կազմակերպվող իրավաբան ուսանողների ամենամյա գիտաժողովը:

2006թ.-ի նոյեմբերի 14-ին Երևան հյուրանոցում կայացավ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից կազմակերպվող «Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական երրորդ գիտաժողովի բանավոր փուլը: Գիտաժողովի հովանավորներն էին Հայաստանի իրավաբանական հիմնադրամը և «ԼԻԳԱ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերությունը: Գիտաժողովն արդեն կայացած ավանդույթ է և նպատակ ունի փաստաբանության բնագավառում բարձրացնել իրավաբան ուսանողների գիտելիքների մակարդակը, խրախուսել նրանց կողմից լուրջ ուսումնասիրությունների իրականացումը, նպաստել ՀՀ-ում փաստաբանական ինստիտուտի դերի բարձրացմանը, ինչպես մաս թույլ է տալիս լսել նոր գաղափարներ և լուծումներ, որոնք առաջարկվում են նոր սերնդի երիտասարդ իրավաբանների կողմից: Գիտաժողովը բաղկացած էր 2 փուլից՝ գրավոր և բանավոր: Գիտաժողովին մասնակցելու հայտ էին ներկայացրել 21 ուսանողներ՝ Երևանից և ՀՀ մարզերի իրավաբանական բուհերից և բուհերի իրավաբանական ֆակուլտետներից: Գիտաժողովի գրավոր փուլին մասնակցեցին սահմանված ժամկետներում կազմակերպիչներին իրենց զեկույցները ներկայացրած 11 իրավաբան ուսանողներ: Ներկայացված հինգ լավագույն աշխատանքների հեղինակները իրավունք ստացան մասնակցել բանավոր փուլին, որի ընթացքում հանդես եկան իրենց զեկույցներով: Երիտասարդ իրավաբանների ելույթները գնահատվում էին գիտաժողովի ժյուրիի կողմից: Գիտաժողովի բանավոր փուլի ժյուրիի անդամներն էին «ԼԻԳԱ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերության նախագահ, փաստաբան Կարեն Զաղոյանը, Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոնի գործադիր տնօրեն, փաստաբան Էլինար Վարդանյանը և Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի փոխնախագահ, փաստաբան Դավիթ Արզարյանը: «Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական երրորդ գիտաժողովի բանավոր փուլի արդյունքների ամփոփման արդյունքում գիտաժողովի երրորդ մրցանակին արժանացավ Երևանի Խ. Աբովյանի անվան Պետական մանկավարժական համալսարանի հինգերորդ կուրսի ուսանողուհի Եսթեր Բարսեղյանը: ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանող Հայկ Կարապետյանն արժանացավ «Լավագույն գրավոր զեկույց» և գիտաժողովի երկրորդ մրցանակներին: Իսկ գիտաժողովի հաղթող և լավագույն հռետոր ճանաչվեց Հայաստանում ֆրանսիական համալսարանի չորրորդ կուրսի ուսանող Գևորգ Մարտիրոսյանը: Գիտաժողովի հաղթողները ստացան արժեքավոր մրցանակներ: Բանավոր փուլի մյուս մասնակիցները և արժանացան խրախուսական մրցանակների: Գիտաժողովի հիմնադիր, փաստաբան Կարեն Զաղոյանը նախատեսել էր գիտաժողովի հատուկ մրցանակ, որը շնորհվեց ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի Լիլիթ Բանալյանին:



ՏԵՍԱԿԵՏ

ՓԱՍՏԱՔԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԸԱՄԱՐ ՍՏԵՂԵՎԱԾ ԵՆ ԸԻՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Փաստաբանության նպատակներն ու խնդիրները դրվում են ոչ միայն փաստաբանների, այլ նաև հասարակության կողմից: Քաղաքացիական հասարակության զարգացումն անհնար է պատկերացնել առանց անկախ և ինքնուրույն փաստաբանական ինստիտուտի կայացման: Փաստաբանական գործունեության հասկացությունը տրված է «Փաստաբանության մասին» 2004թ.-ի ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով, որտեղ մասնավորապես նշված է՝ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած օրինական շահերի իրականացմանը օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով: Վերը նշված հոդվածով նախատեսված է նաև, որ դատական ներկայացուցչությունը կամ քրեական գործերով պաշտպանությունը որպես ձեռնարկատիրական գործունեություն, իրականացնում է միայն փաստաբանը: Մակայն Օրենսդրի կողմից սահմանված այդ նորմը չի կարող կյանքի կոչվել, քանզի այն հակասում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածին, որտեղ նկարագրված է, թե ով է ներկայացուցիչը, ըստ որի, դատարանում ներկայացուցիչ կարող է լինել ցանկացած քաղաքացի, որն ունի դատարանում գործը վարելու պատշաճ ձևակերպված լիազորություն: Ինչ-որ չափով հասկանալի են Օրենսդրի այն նկատառումները, որ դատարանում հանդես գալու՝ այսպես կոչված «մենաշնորհը» պատկանի փաստաբաններին, որն իր հերթին դատական պաշտպանությունը կդարձնի առավել արդյունավետ և արհեստավարժ (պրոֆեսիոնալ): Մակայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետում առկա է նաև մեկ այլ դրույթ, որը ևս որոշակի առումով անհասկանալի է և կարող է բարդություններ առաջացնել: Խոսքը վերաբերում է դատական ներկայացուցչության «ձեռնարկատիրական նպատակներով» արտահայտությանը: Դիցուք, թույլատրվի դատարանում հանդես գալ միայն փաստաբաններին, իսկ ոչ ձեռնարկատիրական նպատակներով՝ նաև այլ անձանց, սակայն, ինչպես ենք պատկերացնում դրա իրականացումը: Արդյո՞ք յուրաքանչյուր անգամ դատավորները, քաղաքացիական գործը վարույթ ընդունելիս կամ դատաքննության փուլում պետք է ճշտեն՝ արդյո՞ք ներկայացուցիչը դատարանում հանդես է գալիս ձեռնարկատիրական նպատակով, թե ոչ:

Կարող է հարց առաջանալ, թե ո՞վ է փաստաբանը, ինչպիսի՞ հատկանիշներով նա պետք է օժտված լինի, ինչպիսի՞ խնդիրներ են դրված այդ մասնագիտության առջև, ինչո՞ւմ է փաստաբանության սոցիալական արժեքը և գործառույթը: Փաստաբան է համարվում այն անձը, որը ստացել է փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր, փաստաբանների պալատի անդամ է և տվել է երդում: Փաստաբանը համարվում է իրավական հարցերով անկախ խորհրդատու: Փաստաբանը աջակցում է հասարակության մեջ իրավունքի գերակայության ամրապնդմանը, իրականացնում է օրինականության քարոզչություն՝ մարդու իրավունքներն ու ազատությունները հարգելու և միջազգային հանրաճանաչ նորմերն ամրապնդելու ուղղությամբ: Փաստաբանն իր գործունեությունն իրականացնելիս անկախ է, ղեկավարվում է միայն ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով, փաստաբանի վարքագծի կանոնակարգով և փաստաբանների պալատի կանոնադրությամբ: Արգելվում է պետության և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց, հասարակական միավորումների և ՉԼՄ-ների միջամտությունը փաստաբանական գործունեությանը: Փաստաբանական գործունեության արտոնագիր կարող է ստանալ այն անձը, որն ունի բարձրագույն իրավաբանական կրթություն կամ իրավաբանի մասնագիտությամբ գիտական աստիճան և իրավաբանի մասնագիտությամբ առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ, հանձնել է որակավորման քննություն և ստացել համապատասխան

վկայագիր: Մակայն Օրենսդիրը «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանել է փաստաբանական գործունեության արտոնագիր տրամադրելու կարգը, ըստ որի, փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու համար հավակնորդը փաստաբանների պալատ է ներկայացնում դիմում՝ փաստաբանների պալատին անդամագրվելու խնդրանքով, որին կցվում է որակավորման հանձնաժողովի տված վկայագիր պատճենը: Ինչպես նաև նույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում, որտեղ սահմանվում է, թե ով է փաստաբանը, հստակ երևում է օրենսդրական պարտադիր այն պահանջը, որ փաստաբանը պետք է լինի փաստաբանների պալատի անդամ: Փաստաբանների պալատը փաստաբանների մասնագիտական անկախ, ինքնակառավարվող իրավաբանական անձ է: Այսինքն՝ այն որոշակի կոնկրետ նպատակներ հետապնդող անձանց միավորում է: Եթե փաստաբանների պալատը միավորում է, իսկ փաստաբան դառնալու, ինչպես նաև փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու համար օրենսդրական պարտադիր պահանջ է ներկայացված այդ միավորմանը անդամակցելու համար, ապա այստեղ հարց է առաջանում՝ արդյո՞ք «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ դրույթները (հոդվածներ 17 և 29) չեն հակասում ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի 4-րդ մասին, ըստ որի, մարդուն չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ կուսակցության կամ միավորման: Պետք է նշել նաև մի շատ կարևոր դրական հանգամանք, որը տեղի է ունեցել պետության և փաստաբանության, ինչպես նաև մարդու իրավունքների առավել արդյունավետ պաշտպանության ոլորտում: Ինչպես գիտենք՝ 1995 թվականի Սահմանադրության 93-րդ հոդվածով նախատեսված էր, որ օրինական ուժի մեջ մտած վճիռները, դատավճիռները և որոշումները Վճռաբեկ դատարանում վերանայվում են գլխավոր դատախազի, նրա տեղակալների կամ հատուկ արտոնագիր ունեցող և Վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանների բողոքի հիման վրա: Բարեբախտաբար, 2005թ.-ին տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումների արդյունքում սպասահմանադրականացվեց վերոնշյալ դրույթը, որի հիման վրա էլ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում կատարվեցին համապատասխան փոփոխություններ և վերացվեց այդ ավելորդ ինստիտուտը: Հանրային պաշտպանությունը և հանրային պաշտպանի գրասենյակը նորամուծություն է հայկական փաստաբանական ինստիտուտում: Նախկինում «Փաստաբանական գործունեության մասին» 1998 թվականի ՀՀ օրենքով նման ինստիտուտ նախատեսված չէր: Այն միայն սահմանվեց «Փաստաբանության մասին» ՀՀ նոր օրենքով: Հանրային պաշտպանությունը տրամադրվող անվճար իրավաբանական օգնություն է: Տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումները, ինչպես նաև գործող քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերը, «Փաստաբանության մասին» ՀՀ նոր օրենքը կարող են հող հանդիսանալ փաստաբանական ինստիտուտի կայացման համար: Եվ վերջապես, վստահորեն կարելի է ասել, որ մեր երկրում փաստաբանության կայացման համար ստեղծված են հիմնական նախադրյալները՝ հաշվի առնելով նաև ոլորտում առկա թերություններն ու բացթողումները:



ԳԵՎՈՐԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հայաստանում ֆրանսիական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանող, փաստաբանությանը նվիրված իրավաբան ուսանողների հանրապետական երրորդ գիտաժողովի հաղթող



ԱՅՍՕՐԿԱ ԲԱԶՄԱԹԻՎ ՄԱՐՏԱՐԱԿԵՐՆԵՐԻՑ ՄԵԿՆ ԷԼ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՈՒՄ Է

-Պարոն Հարությունյան, ներկայումս ՀՀ-ում ունենք համապատասխան օրենսդրական դաշտ, դատարանների վերանորոգված, կահավորված և տեխնիկապես զինված շենքեր, ՀՀ-ում և արևմտյան զարգացած իրավական համակարգեր ունեցող երկրներում վերապատրաստում անցած դատավորներ, ՀՀ փաստաբանների միասնական պալատ, այս հարցերով հետաքրքրված միջազգային և արտասահմանյան կազմակերպություններ՝ իրենց հսկայածավալ ներդրումներով, սակայն անմասն իրավունքների պաշտպանության խնդիրը Հայաստանում դեռևս համարվում է ամենակարևոր և հրատապը: Ինչու՞:

-Որովհետև Ձեր թվարկած բոլոր հարցերում մենք դեռևս չենք հասել որոշակի, անհրաժեշտ համակարգային որակի: Ես չեմ կարծում, թե մենք այդ ոլորտում ունենք անհրաժեշտ կատարելության օրենսդրություն: Օրենքը փոփոխելը կամ օրենք ստեղծելը դեռ չի նշանակում խնդիրը լուծել: Այսօր համակարգային վերափոխման անհրաժեշտություն կա: Ժամանակին, երբ ես ասում էի՝ մենք ունենք դատարաններ, սակայն չունենք դատական համակարգ, շատերը տարակուսում էին, թե ինչպես կարող է դա լինել: Համակարգը նշանակում է դրա բոլոր տարրերի այնպիսի ներդաշնակ գործակցություն, երբ դրա գործառույթն ամբողջությամբ իրացվում է: Այսինքն՝ դատարանի առկայությունն արդարացված է այնքանով, որքանով առկա է և իրական արդարադատությունը: Եթե դատարան կա, սակայն արդյունավետ արդարադատություն չկա, նշանակում է, որ դատարանի գոյությունը դառնում է ինքնանպատակ: Այդ առումով այսօր մեր ամբողջ համակարգը գտնվում է վերափոխումների լուրջ գործընթացում, և մշակված են ծրագրեր, դրանց մասին խոսակցություններ են գնում, քննարկումներ են գնում: Այդ որոշակի մոտեցում առկա է, սակայն խնդիրը հստակ հայեցակարգի շրջանակներում համակարգի ամբողջականությունն ապահովելն ու երաշխավորելն է, որին մենք դեռ չենք հասել և՛ օրենսդրական առումով, և՛ կառուցակարգային լուծումների առումով: Այսինքն՝ այստեղ նախադրյալներն անհրաժեշտ և բավարար չեն, որպեսզի իրավունքների երաշխավորված պաշտպանություն իրականացվի: Ուստի, որքան էլ շենքը բարեփոխվի, պայմանները բարելավվեն, միևնույն է՝ դատարանի անկախությունը և արդյունավետ գործունեությունը պայմանավորված են չորս երաշխիքներով, որոնցից յուրաքանչյուրի բացակայությունը կարող է մեծ բացեր առաջացնել: Դրանք հետևյալներն են:

**Առաջին** գործառնական անկախությունը, ինչը ենթադրում է ոչ միայն գործառույթների հստակեցում, օրենսդրորեն երաշխավորում, այլև ամբողջականացում և արդյունավետ իրացման դատավարական հնարավորությունների ստեղծում, որտեղ, եթե միայն այսօրվա օրենսդրական համակարգն ուսումնասիրենք, բացերը բավականին շատ են:

**Երկրորդ** կառուցակարգային անկախությունը, որը նույնպես մեզ մոտ գտնվում է փոփոխությունների գործընթացում: Օրինակ՝ ստեղծվեցին տնտեսական դատարաններ, հետո պարզվեց, որ դրանք իրենց չեն արդարացնում: Փորձ է արվում ստեղծել վարչական դատարաններ: Իմ անձնական համոզմունքն այն է, որ դրանք տնտեսական դատարանների ճակատագրին են արժանանալու: Բայց բոլոր պարագաներում այժմ գործընթացներ են գնում կառուցակարգային նոր լուծումներ գտնելու առումով, նաև նույնը վերաբերում է ընդհանուր իրավասության դատական համակարգում տարբեր աստիճանի դատարանների փոխգործակցության խնդիրների հստակեցմանը: Սրանք կառուցակարգային լուծումներ են, ինչը դարձյալ փնտրտուքների մեջ է:

**Յուրրորդ**՝ դատական համակարգի նյութական անկախությունը նույնպես հսկայական խնդիր է, որն այսօր չէի ասի, թե արդյունավետ լուծված է:

**Չորրորդ**՝ սոցիալական անկախությունը, որը կարևորագույն խնդիր է, և դարձյալ արդյունավետ լուծված չէ, և փնտրտուքները շարունակվում են:

Այսինքն՝ համակարգային կայացման խնդիրներն այսօր դեռ չեն լուծվել այն մակարդակով և որակով, որպեսզի արդյունավետ արդարադատություն երաշխավորեն: Այդ, երեկվա համեմատությամբ պայմանների բարելավումը դրական քայլ է, այդ, կան որոշակի դրական օրենսդրական բարեփոխումներ, բայց դրանք արդյո՞ք անհրաժեշտ լինելով՝ բավարար են արդյունավետ արդարադատություն երաշխավորելու համար: Ես գտնում եմ, որ ոչ: Մասնավորապես՝ հիմա սահմանադրական



արդարադատության տեսանկյունից տեսանելի է, որ համակարգային փոփոխություններն ինչ-որ անհրաժեշտ ու բավարար նախադրյալներ ստեղծում են: Մյուս համակարգերում նույնը պետք է լինի, և գործակցությունը նույնատիպ պետք է լինի: Եթե երկու տարի անցնի, և ես համոզվեմ, որ Սահմանադրական դատարան դիմած դատավորը միակ «ծիծեռնակն» էր, այլ դիմումներ այլ դատարաններից չեն գալիս Սահմանադրական դատարան, առանց վարանելու կարող եմ ասել, որ այստեղ համակարգային լուրջ հիվանդության հետ գործ ունենք:

*-Այսօր Հայաստանում գրեթե բոլոր պետական մարմինները խոսում են մարդու իրավունքների պաշտպանության կարևորության մասին և շեշտում, որ իրենք իրենց ամենօրյա գործունեության մեջ պաշտպանում են մարդու իրավունքները: Ի՞նչ կասեք այս մասին, և ի՞նչ պետք է արվի, որ իրականում պաշտպանվեն մարդու իրավունքները:*

-Այս առումով այսօր կա հասկացության շփոթ. այդ, ճիշտ եք ասում, որ ՀՀ-ում հիմա ում հարցնեք՝ կասեն՝ մենք իրավունքներ ենք պաշտպանում, այդ թվում գործադիր, օրենսդիր իշխանություններում: Բայց իրականում Սահմանադրությունն այդպիսի խնդիր չի դնում այդ ինստիտուտների առջև: Կա երեք կարևոր խնդիր՝ երաշխավորել այդ իրավունքները, ապահովել այդ իրավունքները, պաշտպանել այդ իրավունքները: Եվ եթե բացենք շատ երկրների Սահմանադրություններ, ապա կտեսնենք, թե որ իշխանության իրավասության մեջ է մտնում երաշխավորելը, որի՞նք՝ ապահովելը և որի՞նք՝ պաշտպանելը: Օրենսդիր մարմինը պետք է օրենսդրորեն երաշխավորի այդ իրավունքները, գործադիրը պետք է ապահովի այդ իրավունքների իրականացումը, և պաշտպանող ինստիտուտները, մասնավորապես, մարդու իրավունքների պաշտպանը, պետք է



պաշտպանեն խախտված իրավունքները: Դատական մարմինները հանդես են գալիս և՛ ապահովողի, և՛ պաշտպանողի դիրքերում: Այն ինստիտուտը, որը չի երաշխավորում, խոսում է պաշտպանությունից, նշանակում է իր գործը չի կատարում: Այն ինստիտուտը, որը պետք է ապահովի, չի ապահովում, խոսում է պաշտպանությունից, նշանակում է՝ նա մտել է բոլորովին այլ դաշտ, իր անելիքը չգիտի այդ ոլորտում: Եվ եթե իր անելիքը չգիտի՝ ուրիշի անելիքն էլ կիսատ-պոսատ է անելու կամ փորձելու է շրջանցել: Եվ մենք մեր քննության առնված գործերի մեջ, ինչպես հայելում, տեսնում ենք բոլորի պատկերը, թե յուրաքանչյուրն իր սահմանադրական լիազորություններն ինչպես է իրականացնում: Այդ պատճառով չափազանց կարևոր է, ինչպես էլ մենք մեր վերջին որոշումներում ստիպված եղանք նշել, որ ՀՀ-ում դեռևս պատշաճ ձևով ընկալված չէ և անհրաժեշտաբար չի իրացվում Սահմանադրության երրորդ հոդվածի պահանջը, որ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Ինչպես նաև մի շարք այլ հոդվածների դրույթները, որ այդ իրավունքների սահմանափակումները չեն կարող գերազանցել ՀՀ միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները, որ այդ իրավունքները պետք է պաշտպանվեն միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան: Երեկ ի՞նչ հոգեբանություն ունեինք, Սահմանադրությունը փոփոխելուց հետո ի՞նչ հոգեբանություն և մոտեցում ունենք այս հարցերին: Եթե դուք չնկատեք որևէ ինստիտուտում այդ տարբերությունը, նշանակում է չի ընկալվել Սահմանադրության փոփոխության էությունը, և այդ երրորդ հոդվածի էությունը: Եթե դա չի ընկալվել, չի հասկացվել, բնական է՝ չի էլ ապահովվի: Բնական է՝ իրավունքները կման պաշտպանված այն վիճակում, ինչ վիճակում կային, կամ ավելի ստույգ՝ անպաշտպան այն վիճակում, ինչ վիճակում կային: Խնդիրը դա է: Համակարգային փոփոխությունները որքանով են հավաքում անհրաժեշտ և բավարար կրիտիկական զանգված էապես խնդրի արդյունավետ լուծումը երաշխավորելու համար: Այսօր դա դեռ հավաքված չէ, այդ փոփոխությունները դեռ ընթացքի մեջ են: Եվ դա պայմանավորված չէ միայն իմ թվարկած գործոններով, այստեղ մի շարք այլ գործոններ անհրաժեշտաբար իրենց դերակատարությունն ունեն: Դա մտայնության վերափոխումն է, իրավագիտակցության փոփոխությունն է, իրավունքների պաշտպանության վերաբերյալ իրազեկվածության աստիճանն է: Օրինակ՝ համալս քաղաքացին գալիս է Սահմանադրական դատարան ինչ-որ վեճով: Ժամերով փորձում ենք բացատրել, որ մեր իրավասությունն օրենքի նորմի սահմանադրականության գնահատումն է: «Ինչպես՞ ս թե, իմ իրավունքը ոտնահարվել է, որք պիտի որոշում ընդունեք և պարտադրեք, որ դա արվի»: Եթե նույնիսկ դիմումների տեքստերը դուք մայեք, նույնիսկ փաստաբանների կողմից կազմված, հաճախ գրվում է. «Իմ պաշտպանյալի նկատմամբ կիրառված բոլոր օրենքները համարել հակասահմանադրական»: Այս պարագայում պարզ է, որ անհնարին է նման իրավագիտակցությամբ արդյունավետ իրավունք պաշտպանել: Դա նշանակում է, որ բոլոր քաղաքացիները խիստ անհրաժեշտ են. և՛ իրավամտաժողովուրդը, և՛ իրավագիտակցությունը, և՛ մարդկանց համապատասխան կրթվածությունը, և՛ պրոֆեսիոնալների՝ իրենց պարտականության պատշաճ կատարումը և, ամենակարևորը, սահմանադրական փոփոխությունների տրամաբանությունը, ոգին յուրաքանչյուրին հասու դարձնելը: Ամենավտանգավորը հասարակական հարաբերություններում այն է, երբ սահմանադրական արժեքները կարող են վերածվել ծխածածկույթի, երբ այդ արժեքները մուտացիայի են ենթարկվում: Երբ այդ արժեքները դառնում են կարգախոսներ, բայց դրանց հետևում արվում են բոլորովին այլ գործողություններ: Դրանցով ոչ միայն այդ արժեքներն են արժեզրկվում, այլ տեղի է ունենում համակարգային արժեզրկում, իսկ դա կարող է բերել նրան, որ մուտացված արժեքները տիրապետող են դառնում, և երբ դրանք վերարտադրվող արժեքներ դառնան, դա արդեն մետաստազ է, այլ բան դրան անվանել չես կարող, իսկ դա

արդեն չափազանց վտանգավոր երևույթ է: Դրա համար այդ բոլոր պարագաներին մեզ մոտ պետք է անհրաժեշտ ուշադրություն դարձվի, որպեսզի կարողանանք առողջ իրավական միջավայր ստեղծել և այդտեղ իրականում կարողանանք երաշխավորել, ապահովել, պաշտպանել իրավունքները:

*-Եվ վերջին հարցը: Որպես անձ, ով իր լուրջ ներդրումն ունի երկրի կայացման և զարգացման գործում, ինչպիսի՞ն կցանկանալիք տեսնել Հայաստանը և, մասնավորապես, Հայաստանի իրավական համակարգը մոտ ապագայում, օրինակ, երեք տարի անց:*

-Այդ հարցը ցանկացած մեկին որ տաք, կարող է ասել՝ կատարյալ, լավ, ամբողջական: Ես այսօր մտածում եմ այսօրվա մասին, թե այսօր ինչ կարելի է անել, որ հնարավոր դրական միտումները խթանվեն, որ հնարավոր բացասական միտումները կաշկանդվեն: Սա լրջագույն խնդիր է, որովհետև ես ունեմ ներքին մտահոգություն, որ եթե բացասական միտումները խորանան և դառնան ինքնավերարտադրելի, այլևս դրանց դեմ պայքարը կարող է դառնալ անհնարին, և դրանք կործանարար հետևանքներ կարող են ունենալ: Իսկ համակարգային առումով դա նշանակում է, որ երբեք սահմանադրական արժեքները հասարակական պրակտիկայում չպետք է դրսևորվեն ձևախեղված: Ես մի գիրք գրեցի, որը վերնագրեցի «Սահմանադրությունից՝ սահմանադրականություն»: Շատերը զարմացան՝ գուցե հակառակը, ես բացատրեցի, որ՝ ոչ, Սահմանադրության գոյությունը դեռևս բավարար չէ: Սահմանադրության գոյությունն անհրաժեշտ բովանդակություն է ձեռք բերում, երբ սահմանադրական արժեքները դառնում են ապրող արժեքներ, երբ գոյություն ունի սահմանադրականություն, այսինքն, երբ սահմանադրական ժողովրդավարությունը դառնում է ապրող իրողություն: Սահմանադրական մշակույթն առկա է այնտեղ, որտեղ սահմանադրական արժեքներն ընկած են հասարակական համաձայնությունների հիմքում: Դրան հասնելու ճանապարհին հիմնախնդիրները շատ են: Օրինակ՝ պարզ մի իրողություն, երբ մեր ժողովուրդը շուրջ 700 տարի կորցրեց իր պետականությունը, մշակել է օրենքի, իրավունքի հանդեպ մերժողական հոգեբանություն: Նա միշտ ժխտել և մերժել է այլ ժողովուրդների օրենքները, որովհետև դրանք իր իրավունքները սահմանափակող օրենքներ են եղել և փորձել է, հակառակվելով դրանց, իր գոյը պահպանել: Այսօր մենք անկախության պարագայում անկախացել ենք քաղաքական հարթության վրա, բայց տեսնո՞ւ եք մեզանից յուրաքանչյուրի ներքում անկախ քաղաքացու անհրաժեշտ որակներ: Մենք անկախ պետությունում ենք, բայց անկախ պետության քաղաքացի չունենք: Որովհետև անկախ պետության քաղաքացու ներքում արժեքային համակարգը պետք է լինի համարժեք իր պետականությանը: Ասում են, եթե հավատալայլը Աստծուն իր ներքում չի գտնում, դրսում որքան էլ փնտրի՝ չի գտնի: Եթե այդ պետությունը, պետականությունը քո ներքում չեղավ որպես արժեքային համակարգ, քաղաքացիական որակների որոշակի համակարգ, դու պետության քաղաքացի չես կարող կոչվել, իսկ եթե պետության քաղաքացի չկոչվեցիր՝ այդ պետությանը, պետականությանը որևէ լիցք չես կարող բերել քո մասնակցությամբ: Այսինքն՝ մենք մարդուն վերափոխելու անհրաժեշտություն ունենք, համակարգի վերափոխման անհրաժեշտություն ունենք: Դրանք մեկ օրում չեն լինում: Վերափոխումը նշանակում է այդ արժեքային համակարգի վերափոխում, իսկ արժեքային համակարգի վերափոխումը չի նշանակում ուրիշներից կապկել: Դա նշանակում է կարողանալ ճանաչել բոնը և ներդաշնակել նրա հետ, ինչը համամարդկային է և ինչն առաջադիմական է: Դրանք լրջագույն խնդիրներ են, որոնք, դարձյալ, մեկ օրում, երկու օրում չեն լուծվում: Այս բոլոր խնդիրների՝ այսօրվա լուծման հաջողությամբ պայմանավորված է վաղը: Այսինքն՝ ժամանակը պետք է դառնա չկորսված հնարավորությունների ժամանակ, որովհետև պետականության կայացումն ունի բազմաթիվ մարտահրավերներ: Այսօրվա բազմաթիվ մարտահրավերներից մեկն էլ իրավական համակարգի կայացումն է:

**ԱՆԿՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԵՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ**

Իրավաբանական ծառայությունների և տեղեկատվության հասանելիությունը անչափ կարևոր է ցանկացած հասարակության համար: Առանց իր իրավունքներին իրազեկ և այդ իրավունքների իրացումն ապահովելու ունակ մարդկանց հնարավոր չէ կառուցել ազատ հասարակություն և իրավական պետություն: Այս առումով պետությունը, տարբեր մեխանիզմների կիրառմամբ, պարտավոր է ապահովել իրավաբանական օգնության և տեղեկատվության մատչելիությունը, հատկապես այն անձանց համար, ովքեր անվճարունակության պատճառով ի վիճակի չեն իրացնելու իրենց իրավունքները: Անվճար իրավաբանական օգնության տրամադրումը տարբեր երկրներում իրականացվում է տարբեր կերպ: Տարբեր են նաև իրավաբանական օգնության ոլորտները, ծավալները և մեխանիզմները: Ինչպես հայտնի է, ներկայումս Հայաստանում պետական միջոցների հաշվին անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվում է ՀՀ Փաստաբանների պալատի կազմում գործող Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից: Հանրային պաշտպանի գրասենյակը անվճար իրավաբանական օգնություն է տրամադրում միայն օրենքով սահմանված որոշակի ոլորտներում, որոնք են քրեական գործերը, ալիմենտի գանձման և խեղման կամ առողջությանն այլ վնաս պատճառելու, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ գործերը: Մնացած բոլոր ոլորտները, այդ թվում ընդհանուր խորհրդատվական և իրավական տեղեկատվության տրամադրման ծառայությունները դուրս են պետական ֆինանսավորման ոլորտից և տարբեր ձևերով և ծավալներով իրականացվում են տարբեր հասարակական կազմակերպությունների, երբեմն նաև առանձին փաստաբանների կողմից: Մույն հոդվածում համառոտ անդրադարձ է կատարվում անվճար իրավաբանական խորհրդատվական ծառայությունների և տեղեկատվության տրամադրման բրիտանական և ամերիկյան փորձին: Հետագայում անդրադարձ կլինի նաև այլ երկրների, հատկապես արևելաեվրոպական որոշ երկրների փորձին:



**ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ**

Մեծ Բրիտանիայում անվճար խորհրդատվական կենտրոնները գործում են՝ սկսած 30-ական թվականներից: Սկզբնական շրջանում դրանց գործունեությունն իրավունքի ոլորտում շատ սահմանափակ էր, կենտրոնները հիմնականում զբաղվում էին սոցիալական, առողջապահական, բնակարանային և այլ ոլորտներում առկա խնդիրների լուծմամբ: Հետագայում դրանց գործունեությունը տարածվեց նաև իրավաբանական հարցերի և իրավաբանական խորհրդատվության վրա: Ներկայումս Մեծ Բրիտանիայում անվճար խորհրդատվական ծառայությունները մատուցվում են երեք տիպի կազմակերպությունների կողմից, որոնք են քաղաքացիների խորհրդատվության բյուրոները, անկախ խորհրդատվական կենտրոնները և իրավաբանական կենտրոնները:

**Քաղաքացիների խորհրդատվական բյուրոներ**

Քաղաքացիների խորհրդատվական բյուրոները (ՔԽԲ) գործում են սկսած 40-ական թվականներից: Դրանք առաջին անգամ ստեղծվել են Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ՝ բնակչությանը ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում օգնելու նպատակով: Հետագայում ՔԽԲ-ները դարձան լիարժեք խորհրդատվական ծառայություններ մատուցող մասնագիտացված կազմակերպություններ: ՔԽԲ-ները բնակչության անապահով խավերին օգնում են լուծելու այնպիսի հարցեր, որոնք կապված են պարտավորությունների, սպառողների իրավունքների, սոցիալական նպաստների, բնակարանային, աշխատանքային, իմիգրացիոն և տարբեր իրավաբանական հարցերի հետ: Այդ բյուրոների խորհրդատուները օգնում են հաճախորդներին լրացնել անհրաժեշտ ձևաթղթեր, կազմել գրություններ և նամակներ, բանակցել, ինչպես նաև ներկայացնում են նրանց դատական առյուծակներում: Յուրաքանչյուր տարի ՔԽԲ-ների ծառայություններից օգտվում է 5,5 մլն. մարդ: Ներկայումս Մեծ Բրիտանիայում գործում են շուրջ 700 ՔԽԲ-ներ: Դրանք տեղական իշխանության մարմիններում գրանցված են որպես շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, բարեգործական կազմակերպություններ և ֆինանսավորվում են տեղական իշխանությունների, բարեգործական հիմնադրամների, անհատ և կորպորացիաների, առևտրային ընկերությունների կողմից: ՔԽԲ-ների աշխատակիցների շուրջ 90%-ը կամավորներ են, այսինքն՝ աշխատում են հասարակական կարգով: Երկրում գործող բոլոր ՔԽԲ-ները միավորված են Քաղաքացիների խորհրդատվական բյուրոների ազգային ասոցիացիայի (ՔԽԲԱԱ) մեջ, որի հիմնական գործառնությունն է խորհրդատվական ծառայությունների ընդհանուր ստանդարտների մշակումը, խորհրդատուների ուսուցումը և վերապատրաստումը, ազգային սոցիալական քաղաքականության

համակարգումը, հրատարակչական և տեղեկատվական աշխատանքը և այլն: ՔԽԲԱԱ-ն ունի բարեգործական կազմակերպության կարգավիճակ:

**Անկախ խորհրդատվական կենտրոններ**

Խորհրդատվական ծառայություններ մատուցող կազմակերպության մյուս տեսակը անկախ խորհրդատվական կենտրոններն (ԱԽԿ) են: Սրանք կոչված են օժանդակելու բնակչությանը՝ իրենց քաղաքացիական իրավունքները իմանալու և դրանք պաշտպանելու գործում: Բոլոր անկախ խորհրդատվական կենտրոնները շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններ են, իրենց բոլոր ծառայությունները մատուցում են անվճար և անկախ են կենտրոնական ու տեղական իշխանություններից: ԱԽԿ-ները միավորվում են Անկախ խորհրդատվական կենտրոնների ասոցիացիայի մեջ, որն ունի բարեգործական կազմակերպության կարգավիճակ: Ներկայումս ասոցիացիան ունի շուրջ 1000 անդամ և համարվում է խորհրդատվական ծառայությունների ամենամեծ ցանցն ունեցող կազմակերպությունը:

**Իրավաբանական կենտրոններ**

Անվճար խորհրդատվական ծառայությունների կազմակերպման մյուս ձևը իրավաբանական կենտրոններն են: Դրանք մատուցում են անվճար և անկախ իրավաբանական ծառայություններ ու ծառայում են աղքատ և հասարակության սոցիալապես առավել անպաշտպան այն խավերին, ում համար մատչելի չէ իրավական և դատական համակարգից օգտվելը: Իրավաբանական կենտրոնները շատ մոտ են կանգնած համայնքներին, հետևաբար նրանք ծառայություններ են մատուցում առավելապես այնպիսի ոլորտներում, որոնք առավել չափով համապատասխանում են տվյալ համայնքի պահանջմունքներին, օրինակ, հաշմանդամների իրավունքներ, կրթական իրավունք, երեխայի իրավունքներ, անչափահասների կողմից կատարվող հանցագործություններ և այլ: Բացի այդ՝ նրանք ծառայություններ են մատուցում սոցիալական ապահովության, իմիգրացիոն, աշխատանքային, բնակարանային, սեռական և ռասայական խտրականության և այլ ոլորտներում: Իրավաբանական կենտրոններում անց են կացվում նաև ուսուցումներ, օրենքների տարածմանն ուղղված



միջոցառումներ, տրվում են օրենքների մեկնաբանություններ և դրանց կատարելագործմանն ուղղված աշխատանքներ: Իրավաբանական կենտրոններում աշխատում են փաստաբաններ, իրավախորհրդատուներ, համայնքային աշխատողներ: Իրավաբանական կենտրոնների անձնակազմը հիմնականում վճարվում է, սակայն կան նաև կամավորներ, հիմնականում իրավաբան-ուսանողներ: Բոլոր իրավաբանական կենտրոնները միավորված են Իրավաբանական կենտրոնների ֆեդերացիայում (ԻԿՖ), որը ստեղծվել է 1978թ-ին: Ամբողջ երկրում գործում են 52 իրավաբանական կենտրոններ, որոնցից 20-ը՝ Լոնդոնում:

Բացի վերոհիշյալ կազմակերպություններից՝ Մեծ Բրիտանիայում գոյություն ունեն խորհրդատվական ծառայություններ մատուցող այլ տիպի կազմակերպությունների ցանցեր ևս, օրինակ, «Հաշմանդամների տեղեկատվության և խորհրդատվության կազմակերպություն», «Իրավունք բոլորի համար» և այլն: Բոլոր այդ կազմակերպությունները Մեծ Բրիտանիայի Խորհրդատվական ծառայությունների միավորման անդամ են:

**ԱՄՆ**

Ամերիկայի Միացյալ Նահանգներում իրավաբանական տեղեկատվության տարածման և անվճար իրավաբանական օգնության կազմակերպումը իրականացվում է ֆեդերալ և տեղական ծրագրերի շրջանակներում: Ֆեդերալ ծրագրերի ֆինանսավորումը իրականացվում է ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից: Անվճար իրավաբանական օգնության ֆեդերալ ծրագրերը հիմնականում իրականացվում են Իրավաբանական ծառայությունների կորպորացիայի (այսուհետև տեքստում՝ կորպորացիա) միջոցով:

**Կորպորացիա**

Կորպորացիան մասնավոր, անդամություն չունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է: Կորպորացիայի տնօրենների խորհուրդը կազմված է 11 անդամներից, ովքեր նշանակվում են ԱՄՆ նախագահի և հաստատվում են Սենատի կողմից: Տնօրենների խորհուրդը կազմվում է երկկուսակցական սկզբունքով: Կորպորացիան կարևոր դեր է խաղում ցածր եկամուտ ունեցող ամերիկացիներին քաղաքացիական իրավական հարցերով իրավաբանական օգնություն և տեղեկատվություն տրամադրելու գործում: Կորպորացիան ստեղծվել է 1974թ.-ին և կոչված է ապահովել ցածր եկամուտներ ունեցող ամերիկացիների քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը և որակյալ իրավաբանական ծառայությունների ու արդարադատության համակարգի մատչելիությունը: Կորպորացիան դրամաշնորհներ է հատկացնում տեղական այնպիսի ծրագրերի, որոնք անվճար իրավաբանական ծառայություն են մատուցում տվյալ նահանգի կամ կոմսության անապահով բնակչությանը: Կորպորացիան նաև ֆինանսավորում է այնպիսի ծրագրեր, որոնք ուղղված են տարբեր մեթոդներով իրավաբանական տեղեկատվության տարածմանը, մասնավորապես, իրավաբանական տեղեկատվություն պարունակող ինտերնետային էջերի պատրաստմանը և տեղադրմանը, ինտերնետով իրավաբանական խորհրդատվության մատուցմանը, իրավաբանների ներգրավմանը ինտերնետային խորհրդատվությանը, ինտերնետի և էլեկտրոնային փոստի միջոցով իրավաբանի և հաճախորդի միջև ինտերակտիվ կապի ստեղծմանը և այլն: Կորպորացիան միջոցներ է տրամադրում ֆեդերալ մակարդակով բնակչության իրավական կարիքների ուսումնասիրման, ինչպես նաև անվճար իրավաբանական ծառայությունների արդյունավետության բացահայտման համար: Համաձայն վիճակագրության կորպորացիայի հաճախորդները ավելի հաճախ իրավաբանական օգնության են դիմում ընտանեկան, բնակարանային, սոցիալական նպաստների, աշխատանքային, բռնությունների, աշխատավարձերի հարցերով: Կազմակերպա-իրավական առումով անվճար իրավաբանական ծառայությունները մատուցվում են շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների կողմից: Այդպիսի կազմակերպություններ են իրավաբանական օգնության հիմնադրամները, իրավաբանական կենտրոնները, իրավաբանական կլինիկաները և այլն: Դրանք, որպես կանոն, գործում են համայնքային ենթակայությամբ: Այդ կազմակերպություններում աշխատում

են թե՛ իրավաբան-խորհրդատուներ և թե՛ տվյալ նահանգի փաստաբանների միության անդամ փաստաբաններ: Տվյալ կազմակերպությունների աշխատանքներին ակտիվորեն ներգրավվում են նաև կամավորներ: Կամավորների համար անց են կացվում ուսուցումներ, որոնք նպաստում են նրանց մասնագիտացմանը իրավաբանության տարբեր ոլորտներում:

**Իրավաբանական կլինիկա**

ԱՄՆ-ում անվճար իրավաբանական օգնության կազմակերպման տարածված ձևերից է իրավաբանական կլինիկան: Իրավաբանական կլինիկաները իրականացնում են երկու հիմնական գործառույթ.

- ա) անվճար իրավաբանական օգնություն՝ ցածր եկամուտ ունեցող անձանց,
  - բ) իրավաբանական բուհերի բարձր կուրսերի ուսանողների պրակտիկ աշխատանքի ուսարդությունների զարգացում:
- Գոյություն ունի իրավաբանական կլինիկաների երկու հիմնական տեսակ: Առաջին խումբը իրենից ներկայացնում է իրավաբանական ֆակուլտետի առանձնացված ստորաբաժանում, որը տեսական գիտելիքներին զուգահեռ տալիս է պրակտիկ աշխատանքի ունակություններ: Այս կլինիկան համապատասխան ֆակուլտետի հետ կապված է ներքին նորմատիվային փաստաթղթերով: Այն ունի իր առանձին դասախոսական կազմը, սպասարկող անձնակազմը, սարքավորումները, գրասենյակը և այն ամենը, ինչ անհրաժեշտ է գործունեության համար: Այսպիսի կլինիկան ղեկավարվում է այլ պարտականություններից ազատված ղեկավարի կողմից: Կլինիկաների մյուս տեսակը բացարձակապես անկախ կազմակերպություն է, որը կարող է սպասարկել մեկից ավելի իրավաբանական բուհերի: Այն իրականացնում է նույն այն գործառույթները, ինչ որ իրավաբանական բուհերին կից գործող կլինիկաները: Իրավաբանական կլինիկաները հնարավորություն են տալիս կապ հաստատել պրակտիկ աշխատանքի փորձ չունեցող իրավաբանի և իրավաբանական խնդիրներ ունեցող իրական հաճախորդի հետ: Այնուամենայնիվ, հնարավոր իրավաբանական սխալներից խուսափելու նկատառումով, խորհրդատվությունն իրականացվում է փորձառու իրավաբանի ներկայությամբ: Իրավաբանական կլինիկաներում, որպես կանոն, մատուցվում են հետևյալ ծառայությունները.
- ա) խորհրդատվություն,
  - բ) փաստաթղթերի կազմում,
  - գ) մասնակցություն դատավարությունների,
  - դ) օրինագծերի փորձաքննություն:
- Իրավաբանական կլինիկաների կազմակերպումը արդյունավետ եղանակ է իրավաբան-ուսանողների պրակտիկ աշխատանքային հմտությունների զարգացման, ինչպես նաև ցածր եկամուտ ունեցող անձանց անվճար իրավաբանական խորհրդատվություն մատուցելու համար:

# ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ

Ուզանդայի Բազանդա ժողովուրդը գողին իշխանություններին չի հանձնում, այլ նրան պատժում է պապական ձևով. սկզբում մեկ-մեկ կտրում է ձախ ձեռքի մատները, ապա՝ արմունկից կտրում թևը:

Կանգաա նահանգի Սթարք քաղաքում բաղի պես կոնչալը համարվում է դատական կարգով պատժելի արարք:

Կալիֆորնիայում կոշիկ մաքրողները պարտավոր են հաճախորդուհու կիսաշրջագետի ծայրերը փակել սեղմիչով՝ նախքան կոշիկների մաքրելը սկսելը:

Պասեդոնում տնօրենին չի թույլատրվում իր քարտուղարուհու հետ մենակ մնալ շենքում:

Հարավային Դակոտա նահանգում գործում է դրույթ, որի համաձայն՝ խոշոր տուգանքի սպառնալիքով 80 տարեկանից բարձր կանանց արգելվում է գրույց սկսել երիտասարդ ամուսնացած տղամարդկանց հետ:

Օհայո նահանգում արգելվում է ուղևորներ փոխադրել տաքսու տանիքին:

- Ամբաստանյալ, ի՞նչ եք ցանկանում ասել ձեր պաշտպանության նպատակով:
- Դատարանից խնդրում են հաշվի առնել իմ փաստաբանի երիտասարդ լինելը:

Դատավոր - Մեղադրյալ, մեկ շաբաթում դուք վեց անգամ գողություն եք կատարել:

Ամբաստանյալ- Այո, ձեր դեղագնացություն, եթե բոլորը աշխատեին այնպիսի եռանդով, ինչպես ես, մեր երկիրը կլիներ բուռն ծաղկման ճանապարհին:

- Որդիս, որքան ամոթ է: Քո գնահատականներն իջեցրել են վատ վարքի համար: Օրինակ վերցրու քո հորից: Վաղը նրան վաղակետ ազատ կարձակեն բանտից լավ վարքի համար ...

- Ձեր տղան, - դիմում է դատավորը գործով վկա մորը, - ծեծել է իր հորը, ձեր ամուսնուն: Այդ ճի՞շտ է:
- Պարոն դատավոր, նա ծեծել է իմ ամուսնուն, բայց նա նրա հայրը չէ: Բարեհոգի եղեք երեխայի նկատմամբ:

Հայտնի բժշկի մոտ ռեստորանում նստում է մի կին և հարցնում, թե ինքն ինչպե՞ս կարող է բուժվել աստմայից: Բժիշկը պատասխանում է նրան, ապա դառնում իրենց կողքին նստած փաստաբանին.

- Ասացեք խնդրեմ, ես կարո՞ղ եմ այդ կնոջն ուղարկել հաշիվ իմ խորհրդատվության համար:

- Անպայման, - պատասխանում է նա:

Երբ բժիշկը վերադարձավ տուն, նրա սեղանի վրա ընկած էր փաստաբանի կողմից ուղարկված հաշիվը:

«Քանի որ ես բաղկացած եմ հինգ անձից, ուստի խնդրում եմ ինձ հատկացնել երեք սենյականոց բնակարան»:

(դիմումից)

«Խնդրում եմ խստորեն քննարկել հանցագործությունը՝ նման և ոչ նման հանցագործություններ թույլ չտալու նպատակով»:

(զեկուցագրից)

«Դիմումի քննարկման արդյունքների հիման վրա պատրաստվել է միջնորդագիր՝ որոշում մշակելու և որոշում պատրաստելու համար»:

(արձանագրությունից)

«Փոխառության պայմանագրի կնքման փաստը հաստատվում է վճարման ժխտումով»:

(վճռից)

«Գնացքի վագոնից թափվել են պայուսակներ ու ճամպրուկներ՝ հափշտակելու նպատակով»:

(դատավճռից)

«Վարորդը չի կարողացել լավ կառավարել իր ավտոմեքենան, որի հետևանքով ընկել է կովի տակ՝ վնասելով կենդանուն»:

(դատավճռից)

«Անասնապահներն աշխատանքի ժամանակ հարբեցողությամբ են զբաղվում, թողնում են անասունները և փչացնում խոտհարքները»:

(մեղադրական եզրակացությունից)



Ընդունման ակտում նշված պակասորդը վրա է հասել անհայտ անձանց գործողությունների հետևանքով անհայտ տեղում, անհայտ պատճառներով, որից պետք է պատասխանողին ազատել պատասխանատվությունից:

(դատարանի որոշումից)

«Տվյալ պահին Տիգրանը վերանորոգում էր զարաժը՝ ձեռքում պահելով բահ, մուրճ, աքցան, երկաթե ձող, և այդ նույն ժամանակ նրան է մոտենում ամբաստանյալը՝ դատարկ ձեռքերով»:

(արձանագրությունից)

«Պատվյալը կատարել է խուլիգանություն, այսինքն՝ հանցանք, որը նախատեսված է քրեական օրենսգրքով, որով որակելու հիմք է հանդիսանում բառն օգտագործելը, որը հատուկ հարմարեցված է եղել մարմնական վնասվածք հասցնելու և ծեծի համար»:

(դատավճռից)

## ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Հեռ.՝ (374 10) 54-01-99

Ֆաքս՝ (374 10) 58-02-99

Էլ.փոստ՝ legalnewsletter@ayla.am

Լրատվական գործունեություն իրականացնող՝

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ

Հասցե՝ ք. Երևան,  
Նալբանդյան 7, բն. 2

Պետական գրանցման վկայականի համարը՝  
03Ա 057970, տրված՝ 27.12.2002 թ.

Թողարկման պատասխանատու և խմբագիր՝  
Նարինե Կարապետյան

### «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ» ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ

Տպաքանակը՝ 500 օրինակ  
Ծավալը՝ 1 տպ. մամուլ  
Ստորագրված է տպագրության  
29.11.2006թ.

Տպագրվում է 2006թ. հունիսից